

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**



**ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ**



**ԵՐԵՎԱՆ 2017**

**Ուղեցույցը հրատարակվել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհրդի երաշխավորությամբ:**

Մեթոդական ուղեցույցի նպատակն է առաջին կուրսի ուսանողներին ծանոթացնել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի պատմությանը, կառուցվածքին, ուսումնառության կանոններին, ուսանողների իրավունքներին և պարտականություններին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը, ներինստիտուտային կառույցներին և նրանց գործունեությանը:

Ուղեցույցում ներկայացված են նաև ուսումնական գործընթացների (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ), քննություններին և ստուգարքներին պատրաստվելու, ինքնուրույն և անհատական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

Մեթոդական ուղեցույցը նախատեսված է ինստիտուտի բոլոր ուսանողների համար:

## ՌԵԿՏՐԻ ՈՒՂԵՐՁԸ



### **Սիրելի՛ ուսանող,**

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը իր գոյության 70 տարիների ընթացքում պատրաստել է ավելի քան 17 հազար ֆիզկուլտուրայի ուսուցիչ, տարբեր մարզաձևերի մարզիչներ, ադապտիվ և բուժական ֆիզկուլտուրայի մասնագետներ, մարզական լրագրողներ, ովքեր հաջողությամբ աշխատում են

ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի ավելի քան 30 երկրում: Այսօր ինստիտուտում սովորում է շուրջ 2800 ուսանող, դասախոսների 50%-ից ավելին ունեն գիտական աստիճաններ և կոչումներ: Բուհի բազմաթիվ շրջանավարտներ դարձել են ճանաչված մասնագետներ, ֆիզկուլտուրային-մարզական շարժման փորձառու կազմակերպիչներ, վաստակավոր ուսուցիչներ և մարզիչներ, գեներալներ, պատգամավորներ:

Ինստիտուտը, լինելով ֆիզկուլտուրային կրթության միակ մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը ՀՀ-ում, եղել, կա և կլինի մարզական կյանքի գիտական կենտրոն, մեր անկախ հայրենիքի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների պատրաստման դարբնոց:

Այն ունի բազում ձեռքբերումներ և հաջողություններ, որոնց շարքում հպարտությամբ պետք է նշել նրա ուսանողների և շրջանավարտների փայլուն հաղթանակները միջազգային հարթակներում, այդ թվում նաև օլիմպիական խաղերում:

Ինստիտուտը ժամանակակից պայմաններում ամեն ինչ անում է ապահովելու շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակը:

Վստահ ենք, որ բուհի դասախոսների, գիտնականների, մարզիչների, կազմակերպիչների կուտակած մասնագիտական փորձը կծառայի մեր երկրի շահերին:

Ցանկանում ենք հետագա զարգացում, նորանոր մարզական հաջողություններ, մասնագիտական, մարզական և գիտական ներուժի կատարելագործում: Թող գալիք տարիները դառնան նոր մտքերի, գիտական նախագծերի և ծրագրերի իրականացման տարիներ:

*ՌԵԿՏՐ՝ ՎԱՀՐԱՄ ԲԱԶՄԱՍԵՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ*

## **ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը կրթական, գիտահետազոտական և սպորտային բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է ֆիզկուլտուրային կրթության ազգային և միջազգային փորձին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստմանը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի իրականացման և ուսանողակենտրոն միջավայր ապահովելու միջոցով մանկավարժական, ֆիզկուլտուրային և սպորտի ոլորտներում գիտելիքի և արժեքների ստեղծմանը, պահպանմանը և հանրային ոլորտում տարածմանը:

## **ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը (այսուհետև՝ Ինստիտուտ կամ ՀՖԿՍՊԻ) ձգտում է դառնալ հաստատություն, որն՝

- ✚ առաջարկում է կրթական նոր տեխնոլոգիաներ, դասավանդման մեթոդներ, հետազոտական մոտեցումներ, որոնք համահունչ են ժամանակակից կրթական սկզբունքներին,
- ✚ ունի գործուն և արդյունավետ կառավարում ու վարչարարություն, անհրաժեշտ ենթակառույցներ, ժամանակակից տեխնոլոգիաներ և ուսումնական բազա, որն ապահովում է կրթության որակի անընդհատ ու շարունակական բարելավում և միջազգայնացում,
- ✚ ապահովում է ֆիզկուլտուրային և սպորտային մասնագիտական բարձրորակ կրթություն, մանկավարժական գրագիտություն, կարողություն տարածելու ու քարոզելու մասնագիտական գիտելիքներ,
- ✚ դաստիարակում է ազգային, հայրենասիրական, բարոյական, համամարդկային և օլիմպիական արժեքներ ունեցող ապագա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ, մարզիչներ, սպորտային մենեջերներ և մարկետոլոգներ, փրկարարներ, մարզական լրագրողներ, սպորտային հոգեբաններ, առողջարարական և ադապտացված ֆիզկուլտուրայի մասնագետներ,
- ✚ մեր հանրապետությունում սպորտային մանկավարժության համակարգի նորագույն մտքի և նորարարության հարցերում ծառայություններ առաջարկողն է,
- ✚ բարձրորակ մասնագետներ է պատրաստում ոչ միայն հանրապետության, այլ նաև սփյուռքի ֆիզկուլտուրային, մարզական և առողջարարական հիմնարկների համար:

## **ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հիմնադրվել է 1945 թվականին: Ներկայումս այն իրականացնում է բակալավրիական, մագիստրոսական և հետբուհական կրթական 12 ծրագիր՝ 23 մասնագիտացումով: Ինստիտուտն ունի 2 ֆակուլտետ, 14 ամբիոն, 204 հոգուց բաղկացած պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմ, որոնցից՝ 8-ը գիտությունների դոկտոր, 29-ը՝ պրոֆեսոր, 50-ը՝ գիտության թեկնածու: Ինստիտուտն ունի հոգեբանական, մանկավարժական, մարզչական, փրկարարական գործ, սպորտային բժշկության և ֆիզիոլոգիայի, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, ֆիզիկական ռեաբիլիտացիայի և սպորտային սոցիոլոգիայի գործունեության ու իրականացման բազմամյա փորձ:

Բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի առկա ու հեռակա բաժիններում սովորում է շուրջ 2800 ուսանող: Ինստիտուտն իր 70-ամյա գործունեության ընթացքում ունեցել է նշանակալի ձեռքբերումներ՝ կրթական, գիտական և սպորտային ոլորտներում: 2014 թվականից ինստիտուտը Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտների միջազգային ասոցիացիայի անդամ է: Արժանացել է բազմաթիվ միջազգային պարգևների և մրցանակների: Լինելով ԱՊՀ մանկավարժական բուհերի ասոցիացիայի անդամ՝ սերտորեն համագործակցում է ԱՊՀ և Եվրոպական մի շարք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտների ու համալսարանների հետ: 2016թ.-ին անցել է Ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով:

## **ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

1. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրության համապատասխան՝ ղեկավարման միանձնյա և կոլեգիալ սկզբունքների հիման վրա:
2. Կառավարման բարձրագույն մարմինը ՀՖԿՍՊԻ-ի հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորություններն են՝
  - ✚ ընտրում է Ինստիտուտի ռեկտորին,
  - ✚ հաստատում է ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը,
  - ✚ հաստատում է ինստիտուտի տարեկան բյուջեն և զարգացման ռազմավարական ծրագիրը,
  - ✚ լսում և գնահատում է Ինստիտուտի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը,
  - ✚ իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Ինստիտուտի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:
3. ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհուրդը՝ Ինստիտուտի ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքները համակարգող մարմինն է: ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհրդի նախագահն է ինստիտուտի ռեկտորը: ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհրդի

կազմում ընդգրկված են ամբիոնի վարիչներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ուսանողներ, որոնք կազմում են գիտական խորհրդի կազմի 25%-ը:

4. **Ինստիտուտի ռեկտորը՝** որպես գործադիր մարմին, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրության հիման վրա իրականացնում է ինստիտուտի ընթացիկ ղեկավարումը, կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրի իրականացումը, բյուջեի կատարումը, հոգաբարձուների խորհրդին ներկայացնում է տարեկան հաշվետվություն, իր լիազորությունների շրջանակում իրականացնում այլ գործառույթներ:

ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորն է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ **Վահրամ Բազմասերի Առաքելյանը (ընդունարանի հեռախոսահամար +37410556281; էլ. փոստ՝ [rector@asipc.am](mailto:rector@asipc.am) )**:

5. **ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորատը** ինստիտուտի ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որն ինստիտուտի խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածներում, իր կանոնակարգով սահմանված լիազորությունների սահմաններում, քննարկում է ինստիտուտի գործունեությանը վերաբերող հարցեր: Ռեկտորատի կազմում ընդգրկված են ինստիտուտի ռեկտորը, պրոռեկտորները, գլխավոր հաշվապահը, ինստիտուտի գիտական քարտուղարը, ֆակուլտետների ղեկանները, ուսումնական մասի ղեկավարը, Որակի ապահովման և Մագիստրատուրայի բաժինների պետերը:

### **ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ինստիտուտի ստորաբաժանումներն են ֆակուլտետները, ամբիոնները, բաժինները, լաբորատորիաները, գիտական գրադարանը, թանգարանը և այլն: Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանվում են ինստիտուտի կանոնադրությամբ և իրենց գործունեությունը կարգավորող իրավանորմատիվային փաստաթղթերով: Ինստիտուտի գծային կառուցվածքին կարող եք ծանոթանալ ինստիտուտի [www.asipc.am](http://www.asipc.am) պաշտոնական կայքում:

Ինստիտուտն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ միասին ուսումնական, գիտական և արտադրական ամբողջություն է, որի միասնությունն ապահովվում է ուսումնական, կրթական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպմանը նրա բոլոր ստորաբաժանումների պարտադիր մասնակցությամբ:

### **ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից, ուսումնական և այլ ստորաբաժանումներից:

Ֆակուլտետի ղեկավար մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և ֆակուլտետի ղեկանը: Ֆակուլտետի խորհրդի կազմի ձևավորման ու գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ: Ֆակուլտետի խորհրդի նախագահը ֆակուլտետի ղեկանն է:

Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի նորմատիվ ակտերին, ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրությանը և ինստիտուտի կառավարման մարմինների կողմից ընդունված ներքին և (կամ) անհատական իրավական ակտերին: ՀՖԿՍՊԻ-ում գործում է երկու ֆակուլտետ և հեռակա ուսուցման բաժին:

## **1. ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Ֆակուլտետի կազմում են՝ Կիրառական մարզաձևերի և լողի, Ըմբշամարտի, Մարզական լրագրության և շախմատի, Մարմնամարզության և սպորտային պարերի, Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի, Սպորտի մանկավարժության և հոգեբանության, Սպորտային մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնները: Ֆակուլտետում իրականացվում է երկու մասնագիտական կրթական ծրագիր՝ 16 մասնագիտացումով (Մարզական լրագրություն, շախմատ, մարմնամարզություն, սպորտային պարեր, փրկարարական գործ, դահուկային սպորտ, հեծանվային սպորտ, լող, ազատ ոճի ըմբշամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, սամբո ըմբշամարտ, ձյուդո, կարատե դո, ծանրամարտ, բռնցքամարտ և սուսերամարտ): Ֆակուլտետում դասավանդում են գիտությունների 4 դոկտոր և 37 թեկնածու: Ֆակուլտետում սովորում են շուրջ 700 ուսանող: Կոնտակտներ՝ +37410556735; E-mail [mm.faculty@asipc.am](mailto:mm.faculty@asipc.am): Ամբիոնների վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն կարող եք ստանալ ինստիտուտի պաշտոնական կայքից:

## **2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Ֆակուլտետի կազմում են՝ Աթլետիկայի, Մարզախաղերի, Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի, Կինեզիոլոգիայի, Ֆիզիոլոգիայի և սպորտի բժշկության, Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի, Լեզուների ամբիոնները:

Ֆակուլտետում իրականացվում է երեք մասնագիտական կրթական ծրագիր՝ կապված ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումների, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիայի ուսումնասիրման հետ: Ֆակուլտետում դասավանդում են գիտությունների 4 դոկտոր և 31 թեկնածու: Ֆակուլտետում 2016-2017 ուստարում սովորում է 511 ուսանող: Կոնտակտներ՝ +37410556745; E-mail [ma.faculty@asipc.am](mailto:ma.faculty@asipc.am): Ամբիոնների վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն կարող եք ստանալ ինստիտուտի պաշտոնական կայքից:

Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի նորմատիվ ակտերին, ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրությանը և ինստիտուտի կառավարման մարմինների կողմից ընդունված ներքին և (կամ) անհատական իրավական ակտերին:

Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից, ուսումնական և այլ ստորաբաժանումներից:

Ֆակուլտետի ղեկավար մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և ֆակուլտետի ղեկանը: Ֆակուլտետի խորհրդի կազմի ձևավորման ու գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ: Ֆակուլտետի խորհրդի նախագահը ֆակուլտետի ղեկանն է:

### **ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում իրականացվում է նաև հեռակա ուսուցում՝ բակալավրի կրթական ծրագրով՝ 5 տարի տևողությամբ (240 ECTS կրեդիտ, յուրաքանչյուր ուսումնական տարվա ծանրաբեռնվածությունը՝ 48 ECTS կրեդիտ):

Հեռակա ուսուցման բաժնում ուսուցումը տարվում է 4 մասնագիտությամբ, **27** մասնագիտացումով (Մարզական լրագրություն, շախմատ, մարմնամարզություն, սպորտային պարեր, փրկարարական գործ, դահուկային սպորտ, հեծանվային սպորտ, լող, ազատ ոճի ըմբշամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, սամբո ըմբշամարտ, ձյուդո, կարատե դո, ծանրամարտ, բռնցքամարտ, սուսերամարտ, բասկետբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, ֆուտբոլ, սեղանի թենիս, մեծ թենիս, աթլետիկա, կինեզիոլոգիա և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա):

Հեռակա ուսուցման բաժնի ուսումնական գործընթացին ընդգրկված է ՀՖԿՍՊԻ-ի համապատասխան ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Կոնտակտներ՝ +37410550453: E-mail

### **ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում մագիստրատուրայի բաժինը սկսել է գործել 2008-2009 ուսումնական տարվանից: Ներկայումս մագիստրոսական կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում իրականացվում են հետևյալ մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ Մասնագիտական մանկավարժություն, Սպորտ, Լրագրություն, Հոգեբանություն, Կառավարում, Շուկայագիտություն (մարքետինգ): Հեռակա ուսուցման համակարգում իրականացվում են միայն հետևյալ ծրագրերը՝ Մասնագիտական մանկավարժություն, Սպորտ, Լրագրություն: Մագիստրոսական կրթական ծրագրի տևողությունը առկա ուսուցման ձևում մեկ ուսումնական տարի է 60 ECTS կրեդիտ ծավալով, իսկ հեռակա ուսուցման ձևում՝ մեկ ու կես ուսումնական տարի՝ 60 ECTS կրեդիտ ծավալով: Ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է մագիստրոսական թեզի պարտադիր պաշտպանությամբ:

### **ԳՐԱԴԱՐԱՆ**

Ինստիտուտն ունի հազեցած, ժամանակակից գրադարան՝ իր ընդարձակ ընթերցասրահով, էլեկտրոնային համակարգչային տեխնիկայով, ինչպես նաև էլեկտրոնային քարտադարանով: Էլեկտրոնային պաշարները հասանելի են ընթերցասրահի համակարգիչներից, ինչպես նաև ինստիտուտի բոլոր ստորաբաժանումներին:

Ընթերցասրահը հիմնովին վերանորոգվել է «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի միջոցներով և հազեցած է անհրաժեշտ գրականությամբ ու ամսագրերով:

Ուսումնագիտական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար հիմնարար նշանակություն ունի հաստատության գրքային և տեղեկատվական բազան, որը կենտրոնացած



է գրադարանում: Տարեցտարի գրադարանի գրքային ֆոնդը համալրվում է ժամանակակից գրականությամբ, համապատասխան տեղեկատվական տարբեր նյութերով, որին նպաստում է անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահի հիմնումը, էլեկտրոնային գրականության հարստացումը:

ՀՖԿՍՊԻ-ի գրապահոցներում առկա է շուրջ 186670 միավոր գրականություն, 2987 ամսագիր: Գրադարանի միջին տարեկան համալրումը կազմում է մոտ 1300 միավոր գրականություն: Գրադարանային ֆոնդում պահանջվող մասնագիտական գրականության բացակայության դեպքում ուսանողները ստանում են լիարժեք տեղեկատվություն ձեռքբերման վերաբերյալ: ՀՖԿՍՊԻ-ի գրքային ֆոնդը համալրվում է սեփական ձեռքբերումների և նվիրատվությունների հաշվին:

### **Գրադարանից օգտվելու կանոնները**

#### **Գրանցվելու կարգը.**

- ✚ Գրադարանից օգտվելու իրավունք ունեն ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, ուսումնաօժանդակ աշխատակիցները: Այլ բուհերի ներկայացուցիչները կարող են օգտվել միայն գրադարանի ընթերցասրահի ծառայություններից:
- ✚ Գրադարանի բաժանորդ կամ ընթերցող դառնալու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը. եթե ուսանող է, ապա իր կարգավիճակի մասին տեղեկանք ֆակուլտետի դեկանատից, իսկ եթե դասախոս է՝ տեղեկանք կադրերի բաժնից, որտեղ պետք է նշված լինի աշխատանքային պայմանագրի տևողությունը:
- ✚ Ընթերցողական քարտն ընթերցողին սահմանված կարգով իրավունք է տալիս օգտվելու գրադարանի կողմից մատուցվող ծառայություններից: Այն, կախված ընթերցողի կարգավիճակից, վավեր է որոշակի ժամկետով՝ բակալավրիատի ուսանողների համար 4 տարի, մագիստրոսի համար 1 տարի, իսկ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար քարտի ժամկետը կախված է տվյալ աշխատակցի և բուհի միջև կնքված պայմանագրի տևողությունից:

#### **Վնասների փոխհատուցման կարգը.**

- ✚ Գրականությունը չվերադարձնելու դեպքում յուրաքանչյուր գրադարանային միավորի համար ուսանողը վճարում է տուգանք՝ սահմանված կարգով:
- ✚ Գրականությունը հանձնելիս՝ թերությունների հայտնաբերման դեպքում ուսանողը պարտավոր է վճարել վնասված գրքի վերականգնման արժեքի եռապատիկ չափով:
- ✚ Գիրքը կորցնելու դեպքում ուսանողը պարտավոր է հատուցել կորցրած գրքի գնի եռապատիկը կամ վերադարձնել նույն հրատարակության այլ օրինակ:

## **ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ**

**ՀՖԿՍՊԻ-ի ուսանողական կառույցներն են՝ Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը:**

**Ուսանողական խորհուրդ.** ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին է: Խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը, ՀՀ օրենսդրությանը և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան, սահմանվում է ինստիտուտի ղեկավար մարմինների որոշումներով և Ուսանողական խորհրդի գործող կանոնադրությամբ:

Խորհուրդը ձևավորում է ներկայացուցչական ընտրությունների սկզբունքով: Մինչև 27 հոգուց բաղկացած յուրաքանչյուր ուսումնական խումբ իրավասու է խորհուրդում ունենալու 1 անդամ, 27 և ավելի ուսանող ունեցող ուսումնական խումբը՝ 2 անդամ: Խորհրդի անդամներն առաջադրվում են ըստ խմբերի: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել են առավել շատ թվով ուսանողներ: Ֆակուլտետային ուսանողական խորհուրդների առաջարկությամբ և նախագահության որոշմամբ յուրաքանչյուր ֆակուլտետում կարող են լրացուցիչ հատկացվել խորհրդի անդամության 1 տեղ՝ ըստ խմբերի:

Խորհուրդը ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները ինստիտուտի ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության և հետդիպլոմային ուսուցում անցնող շրջանավարտների շահերը, նպաստում նրանց հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը, ստեղծում կապեր ՀՀ և արտերկրի բուհերի գիտական, կրթական և այլ կազմակերպությունների հետ:

Ուսանողական խորհրդի նպատակներն են՝

- ✚ Ինստիտուտի ուսանողական ինքնակառավարման և ուսանողական ինքնավարության գործընթացների ծավալման և զարգացման ապահովում, ուսանողության և հետդիպլոմային ուսուցում անցնող անձանց իրավունքների և պարտականությունների անթերի կատարման ապահովում:
- ✚ Մասնակցություն ուսումնակրթական գործընթացների, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսանողական գիտական գործունեության կազմակերպմանը:
- ✚ Ուսանողության ստեղծագործական, մշակութային և հոգևոր զարգացման խթանում, ուսանողության առօրյայի, հանգստի և ժամանցի կազմակերպում:
- ✚ Կապերի և գործնական փոխհարաբերությունների հաստատում ՀՀ և արտերկրի մարզական, գիտական, ուսանողական, երիտասարդական, կրթական, մշակութային միջազգային և այլ կազմակերպությունների հետ:
- ✚ Հնարավորության դեպքում սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրերի իրականացում, ուսանողների սոցիալական և կենցաղային պայմանների բարելավման նպաստում:

**Ուսանողական գիտական ընկերություն.** գործունեության նպատակը ուսանողության գիտական, ուսումնական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելն է:

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են.

- ✚ Գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների կազմակերպում և աշխատանքների ինքնուրույն իրականացում:
- ✚ Ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների և այլ գիտական հետազոտական ուղղվածության միջոցառումների կազմակերպում:
- ✚ Համակողմանի աջակցություն ակտիվ ուսանողներին:
- ✚ Ուսանողների ընդգրկումը տարբեր գիտական ծրագրերում:

ՈՒԳԸ-ի կառուցվածքային օղակներն են՝ ամբիոնային ուսանողական գիտական խմբակները, որոնք ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ՝ կազմված առնվազն 5

ուսանողից: Ամբիոնի խմբակը ղեկավարում է ամբիոնի կողմից երաշխավորված դասախոսը (ցանկալի է գիտությունների թեկնածու):

Ֆակուլտետի ՈւԳԸ-ի ղեկավար մարմինը ֆակուլտետի ուսանողական ԳԸ-ն խորհուրդն է, որը ձևավորվում է յուրաքանչյուր ամբիոնից ներկայացված ուսանողներից: Ֆակուլտետի ՈւԳԸ-ն ղեկավարը առաջադրվում և հաստատվում է ֆակուլտետի խորհրդի կողմից:

Ֆակուլտետի ՈւԳԸ-ի գիտական խորհրդի նիստերը հրավիրվում են կիսամյակում առնվազն մեկ անգամ:

**ՀՖԿՍՊԻ-ի ՈւԳԸ-ի** ղեկավար մարմինը ուսանողական գիտական խորհուրդն է, որը ձևավորվում է ֆակուլտետների կողմից ներկայացված յուրաքանչյուր ամբիոնից մեկական ուսանողով: Ինստիտուտի ՈւԳԸ-ի ղեկավարը առաջադրվում և հաստատվում է Ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:

### **ԿՈՒՐՍԻ ԱՎԱԳԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Յուրաքանչյուր կուրսում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից կուրսընկերները ընտրում են ավագ: Խմբի ավագն ենթարկվում է ֆակուլտետի դեկանին, իր խմբին տեղեկատվություն է ներկայացնում նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին:

Կուրսի ավագի գործառույթներն են՝

- ✚ դասախոսի հանձնարարությամբ ուսանողների հաճախումների անհատական հաշվառումը,
- ✚ ուսանողների չներկայանալու կամ ուշանալու վերաբերյալ կուրսի խորհրդատուին տեղեկացնելը՝ նշելով ուշացման պատճառները,
- ✚ դասատախտակում կատարված փոփոխությունների մասին ուսանողներին տեղեկացնելը,
- ✚ ուսումնական պլանով նախատեսված ծրագրի խախտումով անցկացվող դասախոսությունների մասին ֆակուլտետի դեկանին իրազեկելը:

### **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Ուսումնական խորհրդատուների (կորատորներ) ծառայությունը ՀՖԿՍՊԻ-ում գործում էր մինչև կրեդիտային համակարգին անցնելը: Յուրաքանչյուր կուրսի համար կուրատոր էր ընտրվում մասնագիտական ամբիոնի դասախոսներից մեկը: Կրեդիտային համակարգի ներդրման պահից, ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի համաձայն, յուրաքանչյուր մասնագիտության ուսանողներին կցվում է մասնագիտական ամբիոնի դասախոսներից մեկը՝ որպես խորհրդատու:

Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ՝ համաձայն գործող կարգի:

Խորհրդատուն ուսանողին ծանոթացնում է կրեդիտային համակարգով ուսումնառության ձևին, ուսանողի իրավունքներին և պարտականություններին, ինստիտուտի ներքին կանոնակարգերին, օգնում է ուսանողին իր ուսումնական ծրագրի համար որոշակի կամընտրական մասնագիտական դասընթացներ ընտրել: Ամբիոններում կազմված և հաստատված են

խորհրդատվական պարապմունքների տարեկան աշխատանքային պլան-ժամանակացույցեր, որոնցով առաջնորդվում են և՛ դասախոսները, և՛ ուսանողները:

Յուրաքանչյուր ամբիոնում կազմված են նաև լրացուցիչ պարապմունքների ժամանակացույցեր: Պարապմունքներին մասնակցում են այն ուսանողները, ովքեր դասավանդվող առարկաներից ունեն լրացուցիչ բացատրությունների անհրաժեշտություն՝ կապված տվյալ թեման չյուրացնելու, դասից բացակայելու հետ և այլն:

Խորհրդատու-դասախոսը օգնում է ուսանողին կողմնորոշվելու ավարտական աշխատանքների թեմաների ընտրության հարցերում: Նրա դերը նշանակալից է նաև ուսումնական պրակտիկայի գործընթացում:

### **ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺԻՆ**

ՀՖԿՍՊԻ-ում գործում է պրակտիկայի և կարիերայի բաժինը, որի նպատակներից են.

1. նպաստել սովորողների ընտրած մասնագիտական հմտությունների և գիտելիքների ձեռքբերմանն ու խորացմանը: Հաշվի առնելով այն, որ փորձառությունը (պրակտիկան) ուսումնական գործընթացի տեսակ է, որի հիմնական բովանդակությունը ապագա մասնագիտական գործունեության բնույթին համապատասխան ուսումնական, ուսումնահետազոտական, գիտահետազոտական, արտադրական, մանկավարժական առաջադրանքների կատարումն է,

2. նպաստել աշխատաշուկայում Ինստիտուտի ուսանողության և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, շրջանավարտների և Ինստիտուտի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը:

Առաջադրված նպատակների իրագործման համար բաժինը պարբերաբար լուծում է մի շարք խնդիրներ. կրթական ծրագրերով նախատեսված և Ինստիտուտի ուսումնական պլանի համաձայն տարբեր տեսակի փորձառությունների (պրակտիկա)՝ ուսումնական, ճանաչողական, մանկավարժական, մասնագիտական, կլինիկական, գիտամանկավարժական, գիտահետազոտական նախապատրաստումը, կազմակերպումը և անցկացումը, ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրների ուղղությամբ ինստիտուտում տարվող աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և ամփոփումը, ինստիտուտային կրթական ծրագրերի արդիականության և շարունակական բարելավման ապահովումը, ինչպես նաև ուսանողների, շրջանավարտների և պոտենցիալ գործատուների միջև արդյունավետ կապի ապահովումը:

Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է հաստատված տարեկան աշխատանքային պլան-ժամանակացույցով:

### **ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Բուհում սովորելու ընթացքում գիտելիքների և մասնագիտական հմտությունների հիմնական մասն ուսանողները ձեռք են բերում ինքնուրույն աշխատանքի շնորհիվ: Բուհական ուսուցումն իրականացվում է դասախոսության, ինքնուրույն աշխատանքի, գործնական և լաբորատոր պարապմունքների միջոցով:

Ինքնուրույն և գործնական պարապմունքները օգնում են ուսանողին ամրապնդելու և համակարգելու ստացված գիտելիքները, ընդլայնելու աշխարհայացքն ու զարգացնելու մասնա-

գիտական հետազոտ գործունեության համար անհրաժեշտ որակները: Անհրաժեշտ է ինքնուրույն աշխատանքը սկսել կիսամյակի առաջին իսկ օրերից, որպեսզի ձևավորվի որոշակի կարգ և աշխատանքային հավասարաչափ ռիթմ: Աշխատանքը հստակորեն կանոնակարգելու համար հարկ է գործադրել ջանքեր և զարգացնել կամային հատկանիշներ, իսկ այդ ամենի արդյունքում ամենօրյա աշխատանքը կդառնա թե՛ սովորություն, թե՛ պահանջ:

Ինստիտուտը առանձնահատուկ է նրանով, որ սովորողների մեծ մասը տարբեր մարզաձևերի հավաքական թիմերի ներկայացուցիչներ են, որի պատճառով ինստիտուտում ձևավորված է ընկերասիրության և թիմային աշխատանքի ավանդույթ:

Ի տարբերություն այլ բուհերի, մեր բուհում ուսումնական գործընթացի գրեթե 50 տոկոսը գործնական պարապմունքներ են: Տեսական դասերի հետ համատեղ ֆիզիկական պարապմունքների պարբերաբար անցկացումը բարելավում և ապահովում է մարզական արդյունքների մակարդակի բարձրացումը, նաև վերականգնում է աշխատունակությունը: Դասերի ժամատախտակը, միջանկյալ և ամփոփիչ ստուգումներին ներկայացվող պահանջները կարող եք տեսնել ինստիտուտի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:

## **ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

### **1. ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Դասախոսությունը որևէ գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ դասախոսի կողմից տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ պարզ, հասկանալի և ընկալելի գիտելիքներ: Ըստ էության՝ դասախոսությունը ուսանողի համար գիտական գործունեություն ծավալելու մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցման, ուսումնասիրման և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ:

Ուսումնական պլանով նախատեսված դասավանդվող առարկաների միջև չկան առավել կամ պակաս կարևոր առարկաներ: Բոլորն էլ անհրաժեշտ են, քանի որ յուրաքանչյուր առարկա կարևոր է մասնագիտական գիտելիքների հարստացման և աշխարհայացքի զարգացման համար: Այնուհանդերձ, ըստ կուրսերի ուսանողը կարող է ընտրել իր համար առավել նպատակային առարկաները, որոնք ներկայացված են ուսումնական պլանի ընտրովի առարկաների ցանկում:

Շփումը դասախոսի և լսարանի միջև այն կարևորագույն գործոններից է, որոնցից կախված է դասախոսության որակը: Դասախոսության համար բավարար չէ միայն դասախոսի գերազանց պատրաստվածությունը: Դասախոսությունը պետք է անցկացվի դասախոսի և ուսանողի համատեղ ջանքերով: Այսինքն՝ ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Դասախոսության ընթացքում նյութի իմաստավորման գործընթացն աշխատանքի պարտադիր բաղադրիչն է: Սխալվում է նա, ով կարծում է, թե կարևորը գրելն է, իսկ հասկանալը կարելի է հետո: Այնինչ, դասախոսությունը ոչ թե թելադրություն է, այլ նոր նյութի ընկալում և տեղեկատվության յուրովի իմաստավորում:

Նյութի առավել ծավալուն և դժվար մասերը, որոնց ընկալման համար դասախոսության ընթացքում ժամանակը չի բավարարում, պետք է նշել, որպեսզի հետագայում դասախոսի հետ

դրանք կրկին քննարկվեն: Պետք չէ ամաչել հարցեր տալուց, քանի որ հարցերը վկայում են նյութն առավել լավ յուրացնելու ձգտման մասին: Յուրաքանչյուր դասախոսությունից առաջ անհրաժեշտ է կարդալ նախորդ դասախոսության նյութը, քանի որ պատրաստված ուսանողը հեշտությամբ է ընկալում թեմայի շարունակությունը և նոր հասկացությունները: Ինչ խոսք, կիսամյակի ընթացքում կրկնվող նյութն ավելի դյուրին է յուրացվում, ինչն էլ, բնականաբար, օգնում է քննություններին առավել պատրաստված ներկայանալուն:

**Հուշում.**

- ✚ Դասախոսությունից առաջ անհրաժեշտ է կարդալ գրառումները և վերհիշել նախորդ դասախոսությունը:
- ✚ Ուղղել սխալները, բացել կրճատումները և լրացնել բաց թողնված տեղերը:
- ✚ Դասախոսության գրառումները համեմատել ձեռնարկի համապատասխան թեմայի հետ՝ կատարելով անհրաժեշտ լրացումներ և շտկումներ:
- ✚ Գրառումների մեջ ընդգծել կարևոր հատվածները:

**2. ՍԵՄԻՆԱՐ**

Սեմինարը խմբային գործնական պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է ինքնուրույն, բանավոր պարզ, հասկանալի և համառոտ շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետը և եզրահանգումները: Սեմինարի կարևորագույն բաղադրիչներից է ուսանողի ելույթը համակուրսեցիների առջև: Սեմինար պարապմունքների ժամանակ շատ կարևոր է սեփական մտքերի լիարժեք շարադրումը:

Հարկ է նշել, որ ուսանողների մեծ մասը լավ չի տիրապետում բանավոր խոսքին, ուստի խոսելու ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն լեզվի բառապաշարին և քերականական կառույցներին, այլև ճարտասանության և հոետորական արվեստին:

**Հուշում.**

Եթե Դուք զգում եք, որ լավ չեք տիրապետում բանավոր խոսքին, ապա կազմե՛ք շնորհանդես: Հիշե՛ք միայն պլանը, այլ ոչ թե համառոտ պատասխանները, քանի որ այդ դեպքում Դուք մեխանիկորեն կարդալու եք այն:

- ✚ Աշխատե՛ք պատասխանել՝ հետևելով պլանի կետերին:
- ✚ Աշխատե՛ք չհուզվել, քանի որ Դուք գտնվում եք Ձեր ընկերների շրջապատում, իսկ նրանք բարյացակամ են տրամադրված Ձեր հանդեպ:
- ✚ Աշխատե՛ք հստակ կառուցել Ձեր խոսքը:
- ✚ Աշխատե՛ք տվյալ հարցի վերաբերյալ նախօրոք բարձրաձայն շարադրել Ձեր մտքերը:
- ✚ Հաղթահարեք լսարանի առջև ելույթ ունենալու բարդույթը, համարձակ մասնակցե՛ք բանավեճերին և սխալվելու դեպքում էլ երբեք մի՛ հուսահատվեք:

**3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ**

Գործնական են կոչվում այն պարապմունքները, որոնք անց են կացվում դասախոսի ղեկավարությամբ և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանը և աշխատանքային որոշակի մեթոդների յուրացմանը: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը ձեռք է բերում որոշակի հմտություններ:

Մի՛ փորձեք գտնել պատրաստի պատասխաններ և դրանք ներկայացնել՝ որպես Ձեր կողմից կատարված աշխատանք: Ավելի ճիշտ և օգտակար է տվյալ թեմայի վերաբերյալ խորապես ուսումնասիրել տեսական նյութը և ինքնուրույն լուծում տալ առաջադրված խնդիրներին:

Նշենք, որ առաջադրված խնդիրների յուրօրինակ լուծումները նպաստում են մտավոր կարողությունների զարգացմանը:

#### **4. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Խորհրդատվության ժամանակ ուսանողները պարզաբանում են անհասկանալի հարցերը, դասախոսության բովանդակության կամ մեթոդիկայի հետ կապված խնդիրները, ինչպես նաև «լրացնում» են բաց թողած դասախոսությունները: Խորհրդատվությունը ինստիտուտում կազմակերպվում է արտալսարանային, սովորաբար նշանակվում է քննությունից առաջ, և ուսանողները դասախոսի հետ պարզաբանում են քննական հարցերին առնչվող խնդիրները: Խորհրդատվության ներկայանալը պարտադիր չէ, սակայն չկան այնպիսի թեմաներ, որոնք լրացուցիչ պարզաբանումների կարիք չունեն: Իրականում, խորհրդատվության ժամանակ ուսանողների և դասախոսի միջև՝ հանգիստ մթնոլորտում, տեղի է ունենում հաղորդակցում, որը նպաստում է նյութի ավելի լավ յուրացմանը:

#### **ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Ուսանողի գիտական ինքնուրույն աշխատանքի կարևորագույն մասն է կազմում ավարտական աշխատանքը: Այն ուսումնառության ընթացքում նպաստում են ուսանողի ձեռք բերած գիտելիքների խորացմանը, ընդհանրացմանը և ամրապնդմանը, ինչպես նաև մասնագիտական անհրաժեշտ փորձի կուտակմանը: Գիտական աշխատանքներ կատարելիս ուսանողների մոտ զարգանում են քննադատական մտածողությունը, գիտական գրականության հետ աշխատելու ունակությունները և հմտությունները:

Գիտական աշխատանքները հիմնականում կազմված են տեսական և գործնական մասերից: Ուսանողը ավարտական աշխատանքը գրում է ղեկավարի օժանդակությամբ և իր գիտական աշխատանքը, որը ենթակա է գնահատման, պաշտպանվում է համապատասխան հանձնաժողովի առջև:

Գիտական աշխատանքներն ունեն հստակ կառուցվածք և որոշակի ծավալ: Դրանք կատարելուց առաջ ուսանողը պետք է ծանոթ լինի գիտական աշխատանքին ներկայացվող պահանջներին: Ամփոփիչ ատեստավորման հետ մեկտեղ՝ ավարտական աշխատանքը բուհական ուսումնական գործընթացի վերջին փուլն է կազմում:

#### **Հուշում.**

- ✚ Քանի որ գիտական աշխատանքն ունի հստակ կառուցվածք և որոշակի պահանջներ, ուսանողն աշխատանքը սկսելուց առաջ պետք է ծանոթ լինի ներկայացվող պահանջներին: Պահանջներին կարելի է ծանոթանալ ամբիոնում կամ ղեկավարից: Քանի որ հանձնաժողովի առջև պաշտպանությունը գիտական աշխատանքի կարևոր բաղադրիչներից մեկն է, ուստի միայն գիտական աշխատանք գրելը բավարար չէ, այն պետք է նաև կարողանալ լավագույն կերպով ներկայացնել:

## ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)

Ուսումնական գործընթացի կարևորագույն մասն է կազմում պրակտիկան, որն ուսանողները, ըստ իրենց մասնագիտական կողմնորոշման, անց են կացնում համապատասխան հաստատություններում: Պրակտիկայի բովանդակությունն ու տևողությունը սահմանվում են համապատասխան պետական կրթական չափորոշիչներով և ինստիտուտի ուսումնական պլաններով: Պրակտիկայի կազմակերպումն ուղղված է ուսանողների մասնագիտական գործունեության տիրապետմանը, որակավորման անընդհատ և հետևողական բարձրացմանը:

Ինստիտուտում գործում են պրակտիկայի հետևյալ տեսակները.

- ✚ մանկավարժական,
- ✚ մասնագիտական,
- ✚ կլինիկական:

Պետք է ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել պրակտիկային, քանի որ դրա ընթացքում ձեռք բերած գործնական հմտություններն անհրաժեշտ են որակյալ մասնագիտացում ստանալու համար: Ուսումնական պլանով նախատեսված պրակտիկային հատկացված կրեդիտները շնորհվում են միայն այն դեպքում, երբ ուսանողը կատարել է նվազագույն պահանջները և հաղթահարել է անցումային նվազագույն շեմը: Պրակտիկան միակ դասընթացն է, որը վերահանձման ենթակա չէ: Պրակտիկայի կազմակերպման և անցկացման համար Ինստիտուտում գործում է Պրակտիկայի և կարիերայի բաժինը:

## ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Համաձայն գործող կանոնակարգի՝ բուհում յուրաքանչյուր առարկայական դասընթաց ավարտվում է պարտադիր գնահատմամբ՝ քննություն կամ ստուգարք, որոնց անցկացման ընթացքում բացահայտվում է ուսանողի կողմից գիտելիքի յուրացման աստիճանը:

Քննական և ստուգարքային փուլերը հեշտությամբ հաղթահարելու համար անհրաժեշտ է կատարել ընթացիկ բոլոր առաջադրանքները:

Կիսամյակի ընթացքում կատարված հանձնարարությունների համար ստացված միավորների շնորհիվ կարելի է ստուգարքի կամ քննության ժամանակ մեխանիկորեն հանձնել այն:

Սովորաբար հնարավոր չէ քննությանը նախորդող օրերին լիարժեք յուրացնել քննական նյութը: Քննությունը կամ ստուգարքը հաջողությամբ հանձնելու համար անհրաժեշտ է նաև պատրաստվել ընթացիկ սեմինարներին:

### Հուշում.

- ✚ Եթե վերցրել եք այնպիսի տոմս, որի հարցերին պատասխանելը որոշակի դժվարություններ է պարունակում, մի՛ շտապեք փոխել տոմսը, (քանզի փոխելով տոմսը դուք կորցնում եք միավոր). նախ՝ փորձե՛ք հիշել այն, ինչ գիտեք այդ տոմսի հարցերի վերաբերյալ:
- ✚ Պատասխանե՛ք միայն բուն հարցին: Մի՛ փորձեք ցույց տալ Ձեր տեղեկացվածության աստիճանը՝ խոսելով այլ ոլորտներին առնչվող թեմաներից, քանի որ կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե տվյալ հարցին լավ չեք պատրաստված: Դրանով կարող եք դասախոսին դրդել, որ Ձեզ մի շարք լրացուցիչ հարցեր տա, ինչը կարող է և Ձեր օգտին չլինել:



- ✚ Մի՛ փորձեք խոսքի տեմպի արագացման միջոցով պատմել ավելին: Սակայն պետք չէ նաև շատ դանդաղ խոսել:
- ✚ Ուշադրություն դարձրե՛ք դասախոսի բոլոր հարցերին և դիտողություններին, քանի որ դասախոսը գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար կարող է հուշել հարցի վերաբերյալ իր տեսակետը, ինչն էլ կարող եք պատասխանելու ընթացքում օգտագործել:
- ✚ Մի՛ վախեցեք լրացուցիչ հարցերից, քանի որ դրանք դասախոսը հաճախ օգտագործում է որպես Ձեզ օգնելու միջոց:

### **ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքի ստեղծման նպատակով՝ 1999 թվականի հունիսի 19-ին 29 եվրոպական երկրների կողմից ընդունվեց Բոլոնիայի հռչակագիրը, որով և հիմք դրվեց Բոլոնիայի գործընթացին:

Բոլոնիայի գործընթացի ուղղություններն են.

- ✚ կրթական աստիճանների ճանաչումը (ոլյորընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում),
- ✚ բարձրագույն կրթության երեք աստիճանների (բակալավրիատ, մագիստրատուրա և դոկտորանտուրա) ընդունումը,
- ✚ կրեդիտների համակարգի հիմնումը,
- ✚ ուսանողների, գիտամանկավարժական և վարչական կազմի շարժունության ապահովումը,
- ✚ մասնագետների պատրաստման որակի ապահովման ասպարեզում եվրոպական չափանիշների ընդունումը,
- ✚ բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանումը,
- ✚ հարատև կրթության կարևորումը,
- ✚ բուհերի և ուսանողների ներգրավումը,
- ✚ Եվրոպական բարձրագույն կրթության գրավչության խթանումը,
- ✚ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Եվրոպական հետազոտական տարածքի (ԵՀՏ) համահյուսումը:

Հայաստանը, միանալով Բոլոնիայի գործընթացին, որոշակի քայլեր է իրականացրել՝ Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքին ինտեգրվելու համար: ՀՖԿՍՊԻ-ում 2007–2008 ուսումնական տարվանից ներդրվել է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (*ECTS*), բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները կազմվել են կրեդիտային համակարգի հենքով:

Ամբողջ տեղեկատվությունը տես

**«ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»-ում:**

### **ՈՒՍԱՆՈՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ՀՖԿՍՊԻ-ում գործում է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- ✚ ուսումնական կիսամյակի ընթացքում ուսանողների ձեռքբերումների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսում-

նառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

- ✚ ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործել որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

**1. Ուսանողների գնահատումը** (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

- ✚ դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,
- ✚ գիտելիքների (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում,
- ✚ ինքնուրույն աշխատանքների կատարում (ռեֆերատներ, մշակումներ, շնորհանդեսների կազմում և ներկայացում և այլն):

**2. Գնահատման մեթոդաբանությունը**

Արդյունարար (կիսամյակային) գնահատականը (միավորը) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի. աղյուսակ 1-ում բերված են յուրաքանչյուր առարկայական դասընթացի գնահատման բաղադրիչները:

**Աղյուսակ 1**

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐ
Հաճախում	10
Գիտելիքների յուրացում, կարողությունների և հմտությունների ձևավորում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	20
Ընդամենը	100

Ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվում են 2 ընթացիկ (միջանկյալ ստուգումները) քննություններ, որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է համապատասխան միավոր (**պես ամբիոնի ուղեցույցը**):

**3. Ուսանողների գիտելիքների անհատական գնահատման չափորոշիչներ**

- ✚ **«Գերազանց (90–100)»**, երբ ուսանողը խորությամբ յուրացրել է ուսումնական ծրագիրը, հետևողական և սպառիչ պատասխանում է առաջադրված հարցերին, գործնական և ինքնուրույն աշխատանքները կատարել է ժամանակին, դասերին հաճախել է առնվազն 90%-ով:
- ✚ **«Լավ (80–89)»**, երբ ուսանողը հստակ գիտի նյութը և պատասխանում է առանց մտքեր առաջացնող հարցերի, քաջատեղյակ է գրականությանը, գործնական, ինքնուրույն աշ-

խատանքները և առաջադրանքները կատարել է ճիշտ և ժամանակին, սակայն որոշակի բացթողումներով: Դասերին հաճախել է առնվազն 80%-ով:

✚ **«Բավարար (60–79)»**, երբ ուսանողը քաջատեղյակ է միայն նյութին, շփոթվում է գրականության հարցերից, իսկ առաջադրված հարցերին պատասխանում է ոչ հստակ և ամբողջական. գործնական և ինքնուրույն աշխատանքները կատարել է թերի, ժամկետից ուշ, սխալներով՝ չանդրադառնալով կատարված աշխատանքի որակին: Դասերին հաճախել է առնվազն 50%-ով:

✚ **«Անբավարար (0–59)»**, երբ ուսանողը չի յուրացրել հիմնական նյութը, չի կարողանում բավականաչափ ամբողջական և ճիշտ պատասխանել առաջադրված հարցերին, չգիտի գրականությունից օգտվել գործնական աշխատանքների կատարման ժամանակ, առաջադրանքը կատարված չէ կամ կան սխալներ՝ ազդելով կատարված աշխատանքների որակի վրա: Դասերին հաճախել է ընդամենը 10%-ով:

#### 4. Գնահատման սանդղակը և նշագրումը

Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՌԱՅԻՆ ՆԻՇԸ	ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՎ
ԳԵՐԱԶԱՆՑ	A+	95 – 100
	A	90 – 94
ԼԱՎ	B+	85 – 89
	B	80 – 84
ԲԱՎԱՐԱՐ	C+	70 – 79
	C	60 – 69
ԱՆԲԱՎԱՐԱՐ	F	0 – 59
ՍՏՈՒԳՎԱԾ	S	60– 100
ՉՍՏՈՒԳՎԱԾ	U	0 – 59

1. Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ նշվում է նաև համապատասխան գնահատման տառային նիշը (օրինակ՝ 60, C):

2. Դասընթացները, որոնք ավարտվում են ստուգարքով, գնահատվում են 0–100 միավոր և նշվում է համապատասխան տառային նիշը (օրինակ՝ S ստուգված կամ U չստուգված):

#### ԲՈՂՈՔԱՐԿՈՄ

1.1. Այն ուսանողը կամ դասախոսը, ում ժամանակավոր կամ ընդմիջտ հեռացրել են Ինստիտուտից, կարող է բողոքարկել Ինստիտուտի ռեկտորին:

1.2. Այն ուսանողը, որը կրել է մեղմ պատիժ, կարող է խնդրագիր ներկայացնել ռեկտորին դեպքը վերանայելու համար: Ռեկտորի կողմից նման դեպքերի վերանայումը չի հանդիսանում իրավունքի հարց, սակայն մնում է ռեկտորի հայեցողությանը:

1.3. Սույն Կանոնակարգը խախտող ուսանողը կարող է բողոքարկել՝ հիմնվելով մեկ կամ երկու հետևյալ պատճառների վրա.

- 1) ակադեմիական ազնվության հարցերով զբաղվող հանձնաժողովը որոշել է, որ դասախոսը չի կարողացել ապացուցել ուսանողի խախտումը՝ հիմնվելով զեկուցագրի տվյալների վրա,
- 2) պատիժը չափից ավելի խիստ է,
- 3) սույն քաղաքականության համաձայն ուսանողին զրկել են իր իրավունքներից և մերժումը փաստացի ազդել է որոշման վրա,
- 4) նոր կամ լրացուցիչ վկայություն է հայտնաբերվել ակադեմիական ազնվության հանձնաժողովի հանդիպումից հետո:

1.4. Բողոքարկումը կամ խնդրագիրը պետք է գրվի և ստորագրվի ուսանողի կողմից և ընդգրկի բողոքարկման պատճառները և փաստերը: Այն պետք է ներկայացվի Ինստիտուտի ռեկտորին ակադեմիական ազնվության հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից կայացված վերջնական որոշման մասին ուսանողին տեղյակ պահելուց հետո հինգ օրվա ընթացքում:

1.5. Ինստիտուտի ռեկտորի որոշումը պետք է տեղյակ պահվի և՛ ուսանողին, և՛ խախտումը արձանագրող դասախոսին: Որոշումը ներկայացվում է գրավոր և ընդգրկում է որոշման կայացնելու համար հիմքեր: Ռեկտորի կողմից կայացված ցանկացած վերջնական որոշում պետք է բողոքարկվի Ինստիտուտի կողմից սահմանված կարգով:

**Ամբողջ տեղեկատվությունը տես  
« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ » կանոնակարգում:**

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ**

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում գործում է հաստատված ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման կարգ, որը սահմանում է ինստիտուտում ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման և պետական կրթաթոշակների տրամադրման կարգն ու պայմանները:

Ուսանողների փոխատեղման, ուսման վարձավճարների մասնակի զեղչման պայմաններին և կարգին կարող եք ծանոթանալ ինստիտուտի [www.asipc.am](http://www.asipc.am) պաշտոնական կայքի փաստաթղթեր բաժնում:

**ՀՖԿՍՊԻ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ  
ՀՖԿՍՊԻ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ  
Հաստատված**

**ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ինստիտուտի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրությամբ և սովորողների ներքին կարգապահության կանոններում:

Ստորև համառոտ ներկայացվում են առավել կարևոր դրույթները:

**1. Ինստիտուտի սովորողն իրավունք ունի՝**

- ա) ստանալ գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,
- բ) ըստ նախասիրությունների՝ մասնակցել ինստիտուտում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին,
- գ) մասնակցել ուսուցման որակը հավաստող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- դ) անվճար օգտվել ինստիտուտի գրադարանից, ինտերնետ սրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մարզական և առողջարանային հենակետերից, մասնակցել գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և երիտասարդական համաժողովներին,
- ե) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղել երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալ երկրորդ որակավորման աստիճան,
- զ) ստեղծել ուսանողական հասարակական կազմակերպություններ ուսանողական կյանքին առնչվող հարցերի լուծման համար,
- է) կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ինստիտուտի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին,
- ը) ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ստանալ երկուսից ոչ պակաս արձակուրդ՝ առնվազն 7 շաբաթ ընդհանուր տևողությամբ,
- թ) ստանալ տեղեկատվություն հաշվարկված գնահատականի և հաշվարկի սկզբունքների վերաբերյալ,
- ժ) մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը, ծանոթանալ ուսումնական պլանին և իրենց ներկայացված անհատական ուսումնառության ծրագրին,
- ժա) ծանոթանալ ինստիտուտի կանոնադրությանը և իր իրավունքներին ու պարտականություններին վերաբերող այլ իրավական և ակադեմիական փաստաթղթերին, կնքել պայմանագիր ինստիտուտի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ,
- ժբ) լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի),
- ժգ) սեփական ցանկությամբ ընդմիջել ուսումը և զորակոչվել բանակ, իսկ զորացրվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, վերականգնել ուսանողական իրավունքները,
- ժդ) հանրակացարանի առկայության դեպքում սահմանված կարգով ստանալ բնակատեղ,
- ժե) ինստիտուտում սահմանված կարգով փոխադրվել նախասիրած մասնագիտության, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ այլ բուհ՝ ներառյալ օտարերկրյա:

- ժգ) Ուսումնական պլանները կատարած ուսանողներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ:
- ժէ) Ավարտական վկայականում նշվում են ուսումնասիրված դասընթացները՝ ըստ ամրագրված ակադեմիական կրեդիտների և ակադեմիական առաջադիմության գնահատականների, մասնագիտությունը (մասնագիտացումները): Ուսման մեջ հատուկ հաջողություններ գրանցած ուսանողներին տրվում է գերազանցության դիպլոմ:

**2. Ինստիտուտի սովորողը պարտավոր է՝**

- ա) պահպանել ինստիտուտի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները,
- բ) բարձր պահել ինստիտուտի պատիվն ու հեղինակությունը,
- գ) հաճախել դասախոսություններին, մարզական, գործնական, լաբորատոր պարամունքներին և մասնակցել պրակտիկաներին,
- դ) սահմանված ժամկետում կատարել ուսումնական պլանով նախատեսված ծանրաբեռնվածությունը,
- ե) տիրապետել ապագա մասնագետին անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին:

**3. Ուսանողների ֆինանսական իրավունքներն ու պարտականությունները և դրանց իրականացման կարգն է՝**

- ա) օգտվել ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից,
- բ) ուսանողի ուսման վարձը՝ ուսման առաջադիմության հիման վրա, ուսանողական նպաստի ձևով, լրիվ կամ մասնակիորեն փոխհատուցվում է «Կառավարության կողմից» ամեն տարի տվյալ բուհին և մասնագիտությանը հատկացվող տեղերի ու ֆինանսական միջոցների, ինչպես նաև «Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին,
- գ) սոցիալապես անապահով ուսանողներին պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ (100 %) փոխհատուցում տրամադրվում է «Օրենսդրությամբ սահմանված կարգով,
- դ) ուսանողը կարող է օգտվել ուսանողական նպաստ ստանալու իրավունքից կամ զրկվել այդ իրավունքից, եթե ուսումնական տարվա առաջադիմության հիման վրա մրցութային կարգով կատարվում է ուսանողի կարգավիճակի փոխատեղում (ռոտացիա),
- ե) առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է «պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով ինստիտուտ ընդունված ուսանողներին: Մյուս կուրսերում ուսանողական նպաստ տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով,
- զ) ուսանողի բարձր առաջադիմության և սոցիալական վիճակի արդյունքների հաշվառմամբ, ինստիտուտի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու չափանիշներն ու կարգը սահմանվում են ինստիտուտի կողմից՝ համաձայն «գործող օրենսդրության,
- է) պետական կրթաթոշակը խրախուսման նպատակով տրվում է գերազանց և լավ առաջադիմություն և հասարակական ակտիվություն ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին: Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին: Նախատեսված պայմանները չափահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների,

- ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողները ստանում են ուսանողական կրթաթոշակներ պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակներ, դրամաշնորհներ, ուսանողական վարկեր,
  - թ) ուսման բարձր առաջադիմության, գիտահետազոտական աշխատանքներում և մարզական միջոցառումներին մասնակցելու համար ուսանողները կարող են ստանալ բարոյական և (կամ) նյութական խրախուսանք,
  - ժ) պետական կրթաթոշակ ստացող ուսանողն իրավունք ունի տվյալ ամսվա կրթաթոշակը ստանալ յուրաքանչյուր ամսվա 25-30-ը: 1-3-րդ կուրսերում սովորող ուսանողները կրթաթոշակը ստանում են հրամանով լիազորված կուրսի ավագի միջոցով,
  - ի) վճարովի ուսումնառության պայմաններում սովորողները պարտավոր են վճարել ինստիտուտի կողմից սահմանված ուսման վարձը՝ ուսումնառության յուրաքանչյուր կիսամյակի համար: Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում ուսանողը կարող է հեռացվել ինստիտուտից,
  - յ) ուսման վարձը կայուն է ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի՝ ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում,
  - խ) ուսման վարձը ուսանողը պարտավոր է վճարել ըստ կիսամյակների՝ յուրաքանչյուր կիսամյակի առաջին երկու ամսվա ընթացքում,
  - ծ) կիսամյակում վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման, բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումն ընդհատելու դեպքի: Վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամկետին,
  - կ) եթե վճարովի հիմունքներով սովորող ուսանողը հեռացվել է ուսման վարձը չմուծելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ պետք է վճարի և՛ նախկին պարտքը, և՛ տվյալ կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը,
  - հ) վճարովի ուսուցմամբ սովորող ուսանողի ավելի վճարած ուսման վարձը, որպես կանխավճար, փոխանցվում է որպես հաջորդ կուրսի ուսման վարձ կամ ենթակա է վերադարձման,
  - ձ) վճարովի ուսուցմամբ սովորող ուսանողն ուսման վարձը վճարելուց հետո պարտավոր է տեղեկացնել ղեկանատ իր վճարումների մասին,
  - ղ) գինվորական ծառայության մեկնելու կապակցությամբ և տարկետման պատճառով ուսումն ընդհատելու և հետագայում սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնելու դեպքում ուսման վարձը վճարվում է նախկին պայմանագրով նախատեսված չափով,
  - ճ) ուսման վարձը մուծվում է կանխիկ՝ ինստիտուտի դրամարկղ կամ փոխանցման կարգով՝ ինստիտուտին սպասարկող բանկում բացված հաշվարկային հաշվին:
4. Ուսանողները պարտավոր են խնամքով վերաբերել ինստիտուտի սեփականությանը (գույք, ուսումնական ձեռնարկներ, գրքեր, սարքավորումներ և այլն): Ինստիտուտի սեփականություն հանդիսացող գույքին պատճառած վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն՝ գործող օրենսդրությանը համապատասխան:
5. Ուսանողներին, առանց ինստիտուտի ղեկավարության թույլտվության, արգելվում է լաբորատորիաներից և ուսումնական շենքերից դուրս հանել տարբեր սարքավորումներ:

6. Ուսանողները պետք է լինեն կարգապահ և մաքրասեր, չխանգարեն դասի բնականոն ընթացքը, պահպանեն մաքրություն ինչպես ուսումնական հաստատությունում, այնպես էլ փողոցներում ու հասարակական վայրերում: Պատշաճ մաքրությունը և կարգուկանոնը ինստիտուտում, ինքնասպասարկման հիմունքներով՝ սահմանված կանոններին համապատասխան, ապահովում են տեխնիկական աշխատակազմը և ուսանողները:
7. Ինստիտուտի ուսանողներին բարձր առաջադիմության, գիտահետազոտական և հասարակական կյանքի աշխատանքներին ակտիվ մասնակցության համար սահմանված են հետևյալ խրախուսանքները՝
- ա) շնորհակալության հայտարարում,
  - բ) պատվոգրով պարգևատրում,
  - գ) նվերով պարգևատրում,
  - դ) դրամական պարգևատրում:
- Խրախուսանքի մասին տրվում է ռեկտորի հրամանը՝ համաձայնեցված արհմիութենական կոմիտեի և ուսանողական խորհրդի հետ, այդ մասին ուսանողությանը տեղյակ պահելով խմբի, ֆակուլտետի ժողովում: Խրախուսանքի մասին հրամանի քաղվածքը պահվում է ուսանողի անձնական գործում:
8. Այն ուսանողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ինստիտուտի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև ինստիտուտից հեռացվելը (ազատվելը):
9. Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝
- ա) դիտողություն,
  - բ) նկատողություն,
  - գ) խիստ նկատողություն,
  - դ) ինստիտուտից հեռացում (ազատում):
10. Ուսանողը ինստիտուտից ազատվում է՝
- ա) իր դիմումի համաձայն,
  - բ) այլ բուհ տեղափոխվելու դեպքում:
11. Ուսանողը ինստիտուտից հեռացվում (ազատվում) է՝
- ա) ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով, կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում: Ակադեմիական առաջադիմություն է համարվում քննաշրջանում երեք և ավելի առարկաներից կամ մեկ առարկայից երեք անգամ անբավարար գնահատական ստանալը:
  - բ) ինստիտուտի կանոնադրությամբ և սույն կանոններով նախատեսված պարտականությունների խախտման, այդ թվում մեկ ամսվա ընթացքում 80 ժամ և ավելի բացակայություն ունենալու դեպքերում,
  - գ) ինստիտուտի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:



Կարգապահական տույժերը կիրառվում են անմիջապես զանցանքի հայտնաբերման պահից, սակայն մեկ ամսից ոչ ուշ (չհաշված արձակուրդում գտնվելու ժամանակը): Տույժը չի կարող կիրառվել, եթե զանցանքի կատարման օրից անցել է վեց ամսից ավելի ժամանակ: Եթե ուսանողը մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվում, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

Արգելվում է ուսանողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

12. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է՝

ա) ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,

բ) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում,

գ) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

13. Ինստիտուտից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են ռեկտորի հրամանով ուսուցման բոլոր ձևերում՝ ուսումնառության մինչև հինգ տարի ընդհատման դեպքում: Ինստիտուտից հեռացված (ազատված) ուսանողները՝ որպես կանոն, վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել են: Հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են տվյալ մասնագիտության համար լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի սահմաններում:

14. Ինստիտուտը քննարկում է ուսանողի վերականգնման դիմումը և որոշում նրա ուսումնառության շարունակման կուրսը և մյուս պայմանները, կամ հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը:

15. Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր, որոնք ուսանողը պետք է հանձնի ռեկտորի հրամանով հաստատված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը: Առարկայական տարբերություն է համարվում ուսումնառած պլանում բացակայող առարկան:

16. Ռեկտորը վերականգնվող ուսանողին ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է, ըստ ինստիտուտում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի:

17. Ինստիտուտում ուսումնական պարապմունքներն անցկացվում են սահմանված կարգով հաստատված ուսումնական պլաններին և ծրագրերին համապատասխան: Ուսումնական դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և փակցվում է հաջորդ կիսամյակը սկսվելուց ոչ ուշ, քան 10 (տասը) օր առաջ:

18. Ինստիտուտում դասի (գույգ ակադեմիական ժամի) տևողությունը 80 (ութսուն) րոպե է: Ուսումնական պարապմունքների սկզբի և ավարտի մասին դասախոսները և ուսանողները տեղեկացվում են զանգի ազդանշանով: Պարապմունքների ակադեմիական ժամի ավարտից հետո սահմանված է ընդմիջում՝ առնվազն 10 (տասը) րոպե տևողությամբ:

19. Զանգից հետո ուսանողի մուտքը լսարան մինչև ընդմիջումը արգելվում է առանց դասախոսի թույլտվության: Պարապմունքները սկսվելուց հետո բոլոր ուսումնական և դրան կից տարածքներում պետք է ապահովված լինի լուրջություն և կարգապահություն՝ ուսումնական պարապմունքների բնականոն անցկացման համար: Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ մտնել լսարան և դուրս գալ լսարանից:
20. Լսարաններում, մարզական սրահներում, լաբորատորիաներում գործնական պարապմունքներ անցկացնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է ակադեմիական խմբերի և ենթախմբերի: Ուսանողական խմբերի կազմը, ելնելով գործնական պարապմունքների բնույթից, հաստատվում է ռեկտորի հրամանով:
21. Յուրաքանչյուր ակադեմիական խմբում ուսանողության կողմից ընտրվում և դեկանի կողմից նշանակվում է ավագ՝ առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից: Խմբի ավագն անմիջապես ենթարկվում է ֆակուլտետի դեկանին, իր խմբին տեղեկացնում է նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին: Խմբի ավագի պարտականություններից են՝
- ա) ուսանողների հաճախումների անհատական հաշվառումը,
  - բ) ուսանողների չներկայանալու կամ ուշանալու մասին ֆակուլտետի դեկանին ամենօրյա հաղորդում ներկայացնելը՝ նշելով ուշացման պատճառները,
  - գ) դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ ստանալու և խմբի ուսանողների միջև բաշխելու գործը ժամանակին կազմակերպելը,
  - դ) ֆակուլտետի դեկանի կողմից դասատախտակում կատարված փոփոխությունների մասին ուսանողներին տեղեկացնելը,
  - ե) ըստ հերթականության խմբում ամեն օր հերթապահ նշանակելը,
  - զ) խմբի ուսանողների կրթաթոշակը ժամանակին ստանալու և վճարելու նկատմամբ հսկողություն սահմանելը,
  - է) դասախոսների՝ անորակ, ուսումնական պլանով նախատեսված ծրագրի խախտումով անցկացվող դասախոսությունների մասին ֆակուլտետի դեկանին տեղյակ պահելը,
21. Յուրաքանչյուր ակադեմիական խմբում լրացվում է սահմանված ձևի մատյան, որը պահվում է ֆակուլտետի դեկանատում և ամեն օր, պարապմունքները սկսվելուց առաջ, հանձնվում դասախոսին, վերջինիս հսկողությամբ ավագը նշումներ է կատարում պարապմունքներին ուսանողության հաճախումների վերաբերյալ, իսկ դասախոսը արձանագրում է գործնական պարապմունքներին ուսանողների ակտիվությունը՝ համապատասխան գնահատումներով:
22. Ինստիտուտի մասնաշենքում արգելվում է բարձրաձայն խոսակցությունը, աղմուկը, պարապմունքների ժամանակ՝ էլեկտրոնային սարքեր և բջջային հեռախոսներ օգտագործելը:
- Ինստիտուտում խստիվ արգելվում է ծխելը և ոգելից խմիչքներ օգտագործելը:
23. Ինստիտուտում սահմանվում են ընդունելության օրեր ու ժամեր, որոնց մասին կարելի է տեղեկանալ համապատասխան պաշտոնատար անձանց աշխատասենյակների մոտ փակցված ցուցատախտակներից: